# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԳՈՌԱ ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/80 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 6 | Մետաղական կրող կոնստրուկցիաներ՝ զրուցատաղավար Զրուցատաղավարը պետք է ունենա առնվազն 5մ երկարություն, առնվազն 2,5մ լայնություն և առնվազն 2,9մ բարձրություն: Զրուցատաղավարի ներսում պետք է լինի մետաղական սեղան /առնվազն 800x3800x 900մմ չափսերի/: Զրուցատաղավարի հիմնակմախքը պետք է պատրաստված լինի առնվազն 6 հատ ուղղահայաց կանգնած ուղղանկյուն կտրվածքի մետաղական խողովակներից /առնվազն 80x80x3մմ չափսերի/՝ յուրաքանչյուրի երկարությունը առնվազն 2415մմ և դրանց պետք է եռակցված լինեն վերին մասում /հորիզոնական/ ուղղանկյուն կտրվածքի մետաղական խողովակներ /առնվազն 80x80x3մմ/ առնվազն 2 հատ՝ առնվազն 5000մմ երկարության և առնվազն 2 հատ՝ առնվազն 2500մմ երկարության: Նույն երկարության չափերի մետաղական խողովակներից /առնվազն 30x30x1,5մմ / պետք է եռակցված լինեն նաև ներքևի մասից՝ առնվազն 900մմ բարձրության վրա /չհաշված 0,9մ լայնության մեկ կողմից մուտքի համար/: Սրանց միջև հավասար հեռավորության վրա ուղղահայաց դիրքով պետք է եռակցված լինի առնվազն 900մմ երկարության ուղղանկյուն կտրվածքի /առնվազն 30x30x1,5մմ/ մետաղական խողովակներ /ճաղեր/: Հիմնակմախքի ներսից հատակից հաշված առնվազն 550մմ բարձրության վրա պետք է տեղադրված լնեն 2 կողմերից նստատեղերը՝ ուղղանկյուն կտրվածքի մետաղական խողովակներից /առնվազն 30x30x1,5մմ / առնվազն 2 հատ՝ առնվազն 3800x400x825 մմ չափսերի: Նստատեղերի վրա հեղյուսներով և պնդօղակներով պետք է հավաքված լինեն հղկված փայտյա /առնվազն 25x40մմ/ չորսուներ և լաքապատված:Հիմնակմախքի վերին մասում՝ ուղղածիգ երկու ծայրերում պետք է եռակցված լինենառնվազն 2 հատ՝ առնվազն 650մմ մեծությամբ ուղղանկյուն կտրվածքի |

| | |
|---|---|
| | /առնվազն 30x30x165մմ/ մետաղական խողովակներ և դրանք պետք է իրար եռակցված լինեն նույն կտրվածքի առնվազն 5000մմ երկարության խողովակով: Այդ խողովակին աջ և ձախ կողմերից պետք է եռակցված լինեն նույն կտրվածքի խողովակից առնվազն 4 հատ՝ յուրաքանչյուրը՝ առնվազն 1560մմ երկարության և մյուս ծայրով եռակցված լինեն հիմնակմախքի վերին մասին: Դրանց վրա պետք է հեղյուսներով և պնդողակներով հավաքված լինեն ծածկի գունավոր Պ8 տիպի ցինկապատ թիթեղները՝ առնվազն 19քմ, առնվազն 0,44մմ հաստությամբ: Գագաթի ցինկապատ թիթեղը պետք է լինի առնվազն 0,55մմ հաստությամբ: Զրուցատաղավարում տեղադրվող սեղանը պետք է պատրաստված լինի՝ ոտքերը ուղղանկյուն կտրվածքի մետաղական խողովակից՝ առնվազն 30x30x1,5 մմ չափսերի և շրջանակը՝ նույն կտրվածքի խողովակներից: Սեղանի վերին մասը /հարթակը/՝ մետաղական թիթեղը /առնվազն 0,2մմ հաստությամբ/՝ առնվազն 3,04քմ պետք է եռակցված լինի հիմնակմախքին: B 15 դասի բետոնից կետային հիմքերի պատրաստում՝ առնվազն 0,52խմ, ներդիր էլեմենտների տեղադրում՝ առնվազն 0,12տ: Մետաղական մասերը պետք է ներկված լինեն երկշերտ ներկով: Երաշխիքային սպասարկման ժամկետը՝ առնվազն 1 տարի: ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1.Զրուցատաղավարները պետք է պատրաստված լինեն համաձայն ներկայացվող գծագրի և տեխնիկական բնութագրի: 2.Զրուցատաղավարների համար ներկայացված տեխնիկական բնութագրում փոփոխությունները համաձայնեցնել Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի հետ: 3.Օգտագործվող բոլոր նյութերը և սարքավորումները պետք է համապատասխանեն ՀՀ-ում գործող նորմատիվային պահանջներին, ինչպես նաև ապրանքների որակավորման և պարամետրային ցուցանիշներին: 4.Բոլոր տիպի աշխատանքները պետք է կատարվեն ապահովելով շին.նորմերը, կանոնները, ստանդարտներն ու տեխ.պայմանները: 5.Զրուցատաղավարները պետք է տեղափոխվեն և տեղադրվեն Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կողմից առաջարկվող տարածքներում: *Բոլոր ապրանքները պետք է լինեն նոր, չօգտագործված |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ГОРА ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/80 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 6 | |